Թողարկման վերջնական պայմաններ

17 նոյեմբեր 2026թ.

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
(Թողարկողի անվանումը)

Անժամկետ, անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային պարտատոմս
(արժեթղթի տեսակը)

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռք բերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել ծրագրային ազդագիրը (գրանցված է 11 նոյեմբերի 2026թ. ՀՀ կենտրոնական բանկի նախագահի թիվ 1/444 Ա որոշման համաձայն) և սույն թողարկման վերջնական պայմանները: Ծրագրային ազդագիրը, դրա լրացումները գտնվում են «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ում՝ ՀՀ, 0002, ք. Երևան, Արամի 82-84 հասցեում:

Ընդհանուր տեղեկություններ (Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ,առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթեր են թողարկում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված:)		
1.	Թողարկողը (Թողարկողի անվանումը)	«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
2.	Երաշխավորողը	Նախատեսված չէ ներգրավել երաշխավոր
3.	Սերիան (տվյալ ծրագրային ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը)	Սերիա 1, 2026թ.
4.	Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը	12 000 000 000 (տասներկու միլիարդ) ՀՀ դրամ

5.	Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման ծավալը ՝ ըստ ստորադասության	Մանրամասն ներկայացված է **Ծրագրային Ազդագրի 3.3.6** մասում
6.	Թողարկման արժույթը	ՀՀ դրամ
7.	Առաջարկի գինը	Պարտատոմսերի լրիվ գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց, տեղաբաշխման առաջին օրվանից սկսած հաշվարկվում է հետևյալ կերպ. $DP= CP+AI$ Որտեղ՝ **DP** – Պարտատոմսի լրիվ գինն է. **CP** - Պարտատոմսի մաքուր գինն է. **AI** - Կուտակված արժեկտրոններն են, որոնք որոշվում են Ազդագրի **3.3.8.2** ենթաբաժնում նշված բանաձևով: Տեղաբաշխման առաջին օրը Պարտատոմսի վաճառքի լրիվ գինը հավասար է Պարտատոմսի անվանական արժեքին: Արժեկտրոնները կուտակվում են տեղաբաշխման ամբողջ ժամանակահատվածի համար՝ ըստ օրերի: Յուրաքանչյուր տրանշի Պարտատոմսերի տվյալ օրվա գինը տեղաբաշխման ողջ ընթացքի համար Բանկը կհրապարակ իր ինտերնետային կայքում՝ www.acba.am
8.	Անվանական արժեքը	100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
9.	Քանակը	120 000 (Մեկ հարյուր քսան հազար) հատ

10.	Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխություն)	23 նոյեմբեր 2026թ.
11.	Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխություն)	30 դեկտեմբեր 2026թ. Եթե պարտատոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվում են մինչև այդ ամսաթիվը, ապա առաջարկի իրականացման ավարտի օր է համարվում այն օրը, երբ վաճառվել է վերջին պարտատոմսը:
12.	Արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր	**AMACBAB2UER5**
13.	Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը (լրացվում է այն դեպքում, եթե տվյալ հրապարակային առաջարկի համար առանձին որոշում է ընդունվել, հակառակ դեպքում նշվում է «ոչ կիրառելի»)	1. «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի 27.05.2026թ. թիվ 5.1, 5.2, 5.3 և թիվ 6 որոշումներ, 2. «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի 27.04.2026թ. թիվ 173 - Բ.8 որոշում
Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ		
14.	Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը	23 նոյեմբեր 2026թ.
15.	Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը, եթե Արժեկտրոնի տոկոսադրույքը լողացող է, ապա ներկայացնել տեղեկատվություն ,թե ինչ ցուցանիշից է (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է ստանալ այդ ցուցանիշի/ դրա փոփոխության մասին տեղեկատվություն	Անժամկետ պարտատոմսերի տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքը հաշվարկվելու է հետևյալ կերպ. **1.**Պարտատոմսերի շրջանառության առաջին 60 ամիսների համար արժեկտրոնը սահմանվում է տարեկան **12.50%** ֆիքսված եկամտաբերությամբ, որը կվճարվի կիսամյակային պարբերականությամբ: **2.**Պարտատոմսերի շրջանառության առաջին 60 ամիսների ավարտից հետո յուրաքանչյուր կիսամյակի համար

		սահմանվում է տարեկան արժեկտրոնային լողացող տոկոսադրույք՝ ընթացիկ կիսամյակի սկզբին նախորդող օրվա դրությամբ հրապարակված ՀՀ պետական արժեկտրոնային պարտատոմսերի 6 ամիս ժամկետայնության համար հաշվարկված մինչև մարումը եկամտաբերությանը (yield to maturity) գումարելով հավելյալ **5.50%** (spread): Եթե ստացված արդյունքը գերազանցում է **13.50%**-ը, ապա տոկոսադրույքը սահմանվում է **13.50%**, իսկ եթե այն պակաս է **11.00%**-ից, ապա սահմանվում է **11.00%**: ՀՀ պետական արժեկտրոնային պարտատոմսերի եկամտաբերության կորը հրապարակվում է ՀՀ ԿԲ պաշտոնական ինտերնետային կայքի «ՊՊ եկամտաբերության կորեր» բաժնի «Եկամտաբերության կոր և պարտատոմսերի գների վերաբերյալ տեղեկատվություն (Օրական)» ենթաբաժնում, հետևյալ հղումով՝ **ՊՊ եկամտաբերության կորեր, ՀՀ ԿԲ**:
16.	Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի)	1. 23 մայիս 2027թ. 2. 23 նոյեմբեր 2027թ. 3. 23 մայիս 2028թ. 4. 23 նոյեմբեր 2028թ. 5. 23 մայիս 2029թ. 6. 23 նոյեմբեր 2029թ. 7. 23 մայիս 2030թ. 8. 23 նոյեմբեր 2030թ. 9. 23 մայիս 2031թ. 10. 23 նոյեմբեր 2031թ. ….. և հաջորդ տարիների համապատասխան օրերին (մայիսի 23 և նոյեմբերի 23) Արժեկտրոնների գումարները պարտատոմսերի

		սեփականատերերին/անվանատերերին վճարվում են արժեկտրոնի մարման օրը: Եթե մարման օրը ոչ աշխատանքային օր է, ապա մարման գումարները վճարվում են մարման օրվան հաջորդող աշխատանքային օրը:
17.	Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը (օրնակ 30/360, Act/Act, Act/360 և այլն)	Փաստացի օրեր արժեկտրոնի փուլի ընթացքում/ Փաստացի օրեր տարվա ընթացքում(Actual/Actual)
18.	Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը	«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
19.	Արժեկտրոնի հաշվարկման այլ Էական պայմաններ	Արժեկտրոնների հաշվարկման և վճարման բոլոր էական պայմանները ներկայացված են **Ծրագրային Ազդագրի** 3.3.8.1. և 3.3.8.2 կետերում
20.	Զրոյական արժեկտրոնով (զեղչատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	«ոչ կիրառելի»
Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկատվություն		
21.	Մարման (մասնակի մարումների) ժամկետը	Պարտատոմսերն անժամկետ են և թողարկման պահին չունեն սահմանված մարման ժամկետ: Սակայն. • Բանկի ֆինանսական վիճակի վատթարացմամբ պայմանավորված Պարտատոմսերի կարող են դուրս գրվել կամ մարվել (փոխարկում) **Ծրագրային Ազդագրի** 3.3.9.1. կետում սահմանված դեպքերում, • Բանկի նախաձեռնությամբ Պարտատոմսերի կարող են վաղաժամ մարմվել/հետգնվել **Ծրագրային Ազդագրի** 3.3.9.2. կետում սահմանված դեպքերում:
22.	Մարման (մասնակի մարումների) արժեքը, եթե հնարավոր չէ, ապա նշվում է հաշվարկման մեթոդաբանությունը	«ոչ կիրառելի» (Թողարկողի կողմից **Ծրագրային Ազդագրի** 3.3.9.2. կետով սահմանված վաղաժամ մարում/ հետգնում իրականացնելու դեպքում՝ անվանական արժեքով (100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ):

23.	Մարման արժեքի փոփոխությունը (լրացվում է այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն)	«ոչ կիրառելի»
24.	Վաղաժամկետ մարման հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	Բանկի կողմից նախատեսված է վաղաժամ մարման/հետգնման հնարավորություն՝ համաձայն **Ծրագրային Ազդագրի** 3.3.9.2. կետի:
	Ժամկետ(ներ)ը	Արժեկտրոնների վճարման օերերին, եթե Պարտատոմսերի վաղաժամ մարման/հետգնման ամսաթվի և Պարտատոմսերի տեղաբաշխման մեկնարկի ամսաթվի միջև տարբերությունը կազմում է առնվազն 5 օրացուցային տարի:
	Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում)	Անվանական արժեք
	Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեք	«ոչ կիրառելի»
	Այլ տեղեկություններ	
25.	Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ/փութ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	«ոչ կիրառելի»
	Ժամկետ(ներ)ը	
	Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում)	«ոչ կիրառելի»
	Այլ տեղեկություններ (տեղեկացման ժամանակաշրջանը)	
Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ		
26.	Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը	«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ, ՀՀ, 0002, ք. Երևան, Արամի 82-84
27.	Տեղաբաշխման այլ պայմաններ (որոնք ներառված չեն ազդագրում)	Մեկ ներդրողի նկատմամբ կիրառվող ձեռք բերվող պարտատոմսերի ծավալի սահմանափակումները հետևյալն են. տեղաբաշխման ժամկետի ընթացքում **25** (քսանհինգ) հատից ոչ պակաս և **25 000** (քսանհինգ հազար) հատից ոչ ավել:

Այլ տեղեկություններ		
28.	Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության առկայություն (նշվում է համապատասխան կարգավորվող շուկաների անվանումները, թույլտվության ամսաթիվը)	Արժեթղթերը դեռ թույլատրված չեն կարգավորվող շուկայում առևտրին
29.	Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, ապա նշվում է տեղեկություններ այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել, առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը(հնարավորության դեպքում))	Թողարկողը պարտադիր դիմելու է պարտատոմսերը կարգավորվող շուկայում՝ «Հայաստանի Ֆոնդային Բորսա» ԲԲԸ-ում, ցուցակելու համար առաջարկվող պարտատոմսերի մասով տեղաբաշխման ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, և համաձայն ՀՀ գործող օրենսդրության պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում: Առևտրին թույլտվության հայցը կարող է նաև չբավարարվել:
30.	Արժեթղթերի վարկանիշը	Արժեթղթերը վարկանիշ չունեն
31.	Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը	Ներկայացված է **Ծրագրային Ազդագրի 3.4 մասում:**

Թողարկողը պատասխանատու է սույն *«Թողարկման վերջնական պայմաններում»* ներառված տեղեկությունների համար: Թողարկողը հավաստիացնում է, որ սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները համապատասխանում են այն տեղեկություններին (ներկայացված ընդհանուր մեթոդաբանությանը), որոնք ներառված են Ծրագրային Ազդագրում, դրա լրացումներում, ինչպես նաև ճշգրիտ են (այնքանով որքանով հայտնի են), և որևէ փաստ բաց չի թողնվել կամ խեղաթյուրվել:

Հակոբ Անդրեասյան	Գլխավոր գործադիր տնօրեն		17.11.2026թ.
(անուն,ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արմեն Հակոբյան	Ֆինանսական տնօրենի Ժ/պ		17.11.2026թ
(անուն,ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Նիկոլայ Հովհաննիսյան	Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ - Գործառնական տնօրեն		17.11.2026թ
(անուն,ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Նորիկ Նազարյան	Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ - Մանրածախ բիզնեսի տնօրեն		17.11.2026թ
(անուն,ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Տիգրան Սիմոնյան	Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ - Թվային պլատֆորմների և տեխնոլոգիաների տնօրեն		17.11.2026թ
(անուն,ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արմեն Հակոբյան	Գլխավոր հաշվապահ		17.11.2026թ.
(անուն,ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում եմ՝

Հակոբ Անդրեասյան	Գլխավոր գործադիր տնօրեն		17.11.2026թ.
(անուն,ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Կ.Տ.